**<u>ԶԵԿՈՒՑԱԳԻՐ</u>**

***06 դեկտեմբեր 2023թ.***

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՊԱՐՈՆ Հ. ԲԱԼԱՍՅԱՆԻՆ**

# Հաստիքային փոփոխության վերաբերյալ

Հարգելի պարոն Բալասյան

Առաջարկում եմ «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն բյուջետային հիմնարկի» 2024 թվականի հաստիքացուցակում կատարել հետևյալ փոփոխությունները՝ քանի որ հիմնարկում աշխատում են 2 հաստիքային միավորով կազմակերպիչներ, և աշխատանքներն իրականացվում են ըստ պահանջի, առաջարկում եմ գեղարվեստական ղեկավարի մեկ հաստիքային միավորը կրճատել: Շախմատի մարզիչի մեկ հաստիքային միավորը դարձնել 0,5 դրույքի, քանի որ խմբակ հաճախող երեխաների թիվը քիչ է: Նախատեսվում է նաև 2024 թվականի հունվարի 1-ից ստեղծել ձեռագործ աշխատանքների խմբակի ղեկավարի հաստիք 0,5 դրույքային միավորով, ձեռագործության արվեստը զարգացնելու նպատակով: Դռնապանի հաստիքը համալրել 0,5 դրույքային միավորով մշակույթի տան հսկողական աշխատանքները ավելի կանոնակարգված իրականացնելու նպատակով:

Զեկուցող՝ ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ